

Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Մեր տան մեջ —

ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐ ՄԱՐԳԱՐԵԻՑ

Օրհնված ընտանեկան կյանք

«Երբ մենք բավականին փորձ ենք ունենում, շրջագայում ենք հեռուներում և տեսնում, թե որքան վաղանցիկ և երբեմն մակերեսային են աշխարհում շատ բաներ, մեր երախտագիտությունը մեծանում է նրա համար, որ մենք բացառիկ հնարավորություններ՝ լինելու մաս մի բանի, ինչին կարող ենք ապավինել - տան, ընտանիքի և սիրած էակների հավատարմության: Մենք սկսում ենք գիտակցել, թե ինչ է նշանակում կապված լինել պարտականությամբ, հարգանքով, պատկանելիությամբ: Մենք սովորում ենք, որ ոչ մի բան չի կարող փոխարինել ընտանեկան կյանքի օրհնված փոխհարաբերություններին»: [1]

Կիսելով մեր սերը

«Գովեք ձեր երեխաներին, գրկեք նրանց և ավելի հաճախ ասեք. «Ես սիրում եմ քեզ»: Միշտ հայտնեք ձեր երախտագիտությունը: Երբեք թույլ մի տվեք, որ խնդրի լուծումը դառնա ավելի կարևոր, քան անձի սիրված լինելը: Ընկերները հեռանում են, երեխաները մեծանում են, սիրված էակները մահանում են: Այնքան հեշտ է ըստ արժանվույնս չգնահատել ուրիշներին, մինչև այն օրը, երբ նրանք հեռանում են մեր կյանքից, և մեզ հետ մնում են «իսկ եթե» և «եթե միայն» զգացողությունները»: . . .

Եկեք վայելենք կյանքը ապրելու ընթացքում, ուրախություն գտնենք ճանապարհորդության ընթացքում և կիսենք մեր սերը ընկերների և ընտանիքի հետ: Մի օր մեզանից յուրաքանչյուրը կկորցնի վաղվա հնարավորությունը: Եկեք չհետաձգենք այն, ինչն ամենակարևորն է»:[2]

Ցույց տալով մեր սերը

«Եղբայրներ, եկեք արժանապատվությամբ և հարգանքով վերաբերվենք մեր կանանց: Նրանք մեր հավերժական զուգընկերներն են: Քույրեր, հարգեք ձեր ամուսիններին: Նրանք կարիք ունեն լավ խոսքի: Նրանք կարիք ունեն ընկերական ժպիտի: Նրանք կարիք ունեն ճշմարիտ սիրո ջերմ արտահայտության: . . .

Նրանց, ովքեր ծնողներ են, ես ասում եմ՝ սեր ցուցաբերեք ձեր երեխաների հանդեպ: Դուք գիտեք, որ սիրում եք նրանց, բայց այնպես արեք, որ նրանք նույնպես իմանան դա: Նրանք շատ թանկ են: Թող նրանք իմանան դա: Կանչեք առ մեր Երկնային Հայրը օգնության համար, մինչ ամեն օր հոգում եք նրանց կարիքները և երբ խնդիրներ եք ունենում, որոնք անխուսափելի են, երբ ծնող եք լինում: Միայն ձեր սեփական իմաստությունը բավական չէ նրանց մեծացնելու համար»:[3]

Արտահայտելով մեր սերը

«Ծնողներ, արտահայտեք երեխաների հանդեպ ձեր սերը: Աղոթեք նրանց համար, որպեսզի նրանք կարողանան դիմակայել աշխարհի չարիքին: Աղոթեք, որպեսզի նրանք կարողանան աճել հավատքի և վկայության մեջ: Աղոթեք, որպեսզի նրանք կարողանան ապրել բարությամբ և ուրիշներին ծառայությամբ լի կյանքով:

Զավակներ, ձեր ծնողներին ասացեք, որ սիրում եք նրանց: Թող նրանք իմանան, թե որքան շատ եք դուք գնահատում այն ամենը, ինչ նրանք արել և շարունակում են անել ձեզ համար»:[4]

Այն, ինչն ամենակարևորն է

«Այն, ինչն ամենակարևորն է, գրեթե միշտ ներգրավում է մեր շրջապատի մարդկանց: Հաճախ մենք ենթադրում ենք, որ նրանք պետք է, որ իմանան, թե որքան շատ ենք մենք նրանց սիրում: Սակայն մենք չպիտի երբեք ենթադրենք. մենք պետք է այնպես անենք, որ նրանք իմանան: Վիլիամ Շեքսպիրը գրել է. «Չեն սիրում նրանք, ովքեր ցույց չեն տալիս իրենց սերը»: Մենք երբեք չենք զղջա ասված բարի խոսքերի կամ ցուցաբերած հոգատարության համար: Փոխարենը մենք կզղջանք, եթե նման բաները բացակայել են մեր հարաբերություններում նրանց հետ, ովքեր ամենակարևոր նշանակությունն ունեն մեզ համար»:[5]

Երկինքը մոտ բերել

«Թող մեր ընտանիքներն ու տները լցված լինեն սիրով՝ իրար հանդեպ սիրով, ավետարանի հանդեպ սիրով, մեր մերձավորների հանդեպ սիրով և մեր Փրկչի հանդեպ սիրով: Որպես արդյունք՝ երկինքը մի փոքր ավելի մոտ կլինի երկրին:

Թող որ մենք դարձնենք մեր տները ապաստաններ, ուր մեր ընտանիքի անդամները միշտ կցանկանան վերադառնալ»:[6]

Աղոթք ընտանիքների համար

«Քանի որ ընտանիքը այսօր աշխարհում գտնվում է վտանգի տակ, և երկար ժամանակ սուրբ պահված շատ բաներ ծաղրի են ենթարկվում, մենք խնդրում ենք Քեզ, մեր Հայր, հավասարազոր դարձնես մեզ այն խնդիրների հետ, որոնց հանդիպում ենք, որպեսզի մենք կարողանանք ամուր կանգնել ճշմարտության և արդարության մեջ: Թող մեր տները լինեն խաղաղության, սիրո և հոգևոր ապաստաններ»:[7]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "A Sanctuary from the World," *Worldwide Leadership Training Meeting*, Feb. 9, 2008, 29.
2. "Joy in the Journey" (Brigham Young University Women's Conference, May 2, 2008), http://ce.byu.edu/cw/womensconference/archive/transcripts.cfm.
3. «Մեծապես օրհնված», *Լիահոնա,* Մայիս 2008, 112:
4. «Մինչև նոր հանդիպում», *Լիահոնա,* Մայիս 2009, 112:
5. «Ուրախություն գտնելով ճանապարհորդության ընթացքում», *Լիահոնա,* Նոյեմբեր 2008, 86:
6. «Ապաստան աշխարհից», 30-31:
7. Գիլա Վելի Արիզոնա Տաճարի նվիրագործման աղոթք, Մայիս 23, 2010. "The Gila Valley Arizona Temple: 'Wilt Thou Hallow This House,'" *Church News,* May 29, 2010, 5:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

«Մտքերի փոխանակման ժամանակ ուսուցիչը ներկայացնում է մի հարց կամ իրադրություն և ուսանողներին տալիս է մի փոքր ժամանակ - ազատորեն լուծումներ կամ գաղափարներ առաջարկելու համար» (*Teaching, No Greater Call* [1999], 160): Այս հոդվածը ընտանիքի հետ կարդալիս, խնդրեք նրանց ուշադրություն դարձնել այն խորհուրդներին կամ գաղափարներին, որոնք տպավորել են իրենց: Ընտանիքի անդամները այնուհետև կարող են նոր գաղափարներ առաջարկել, որոնցով կարող են մեծացնել սերը իրենց տանը: Հրավիրեք ընտանիքին վերանայել այս գաղափարները գալիք ընտանեկան երեկոյի ժամանակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Մայրս փրկեց մեզ

Պատրիցիա Օքսյեր

Երբ ես վեց տարեկան էի, ես և իմ փոքր քույրը դիտում էինք մեր մեծ քույրերի բասկետբոլի խաղը: Հայրս հեռացավ, և մենք որոշեցինք տուն գնալ նրա հետ, ուստի մենք անձրևի տակ վազեցինք նրա ետևից: Երբ մենք չկարողացանք նրան գտնել, մենք հետ վերադարձանք մարզասրահ, որպեսզի տուն գնայինք մեր մայրիկի հետ, բայց մինչ մենք մտանք մարզասրահ, բոլորն այնտեղից արդեն գնացել էին:

Ես հիշում եմ, թե ինչպես էի փորձում պատսպարվել շքամուտքի մոտ, պաշտպանելով ինձ ու փոքր քրոջս անձրևից, աղոթելով, որ ինչ-որ մեկը գար: Հետո ես հիշում եմ, որ լսեցի մեր կարմիր

բեռնատարի դռան փակվելու ձայնը, և մենք վազեցինք այդ ձայնի ուղղությամբ: Այնուհետև տեղի ունեցավ իմ մանկության ամենավառ հիշողություններից մեկը. մայրս առել էր մեզ իր բազուկների մեջ, «ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին» (3 Նեփի 10.4): Մայրս փրկեց մեզ, և ես երբեք ինձ ավելի ապահով չեմ զգացել, քան այդ պահին:

Երբ ես մտածում եմ ինձ վրա նրա ազդեցության մասին, տեսնում եմ, որ մորս կյանքը ուղղել է ինձ դեպի Փրկիչը և ինձ ցույց է տվել, թե ինչ է նշանակում «բարձրացրու ընկած ձեռքերը և ամրացրու տկար ծնկները» արտահայտությունը (ՎևՈՒ 81.5): Նա հույսը դնում էր Հիսուս Քրիստոսի վրա, ով տալիս էր նրան ուժ «իր սեփականից առավել» (“Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220):

ԵՐԵԽԱՆԵՐ

Կառուցել երջանիկ տուն

Նախագահ Մոնսոնը ուղիներ է առաջարկում, որոնց օգնությամբ մենք կարող ենք կառուցել երջանիկ տուն: Հոդվածի մեջ որոնեք և գտեք բաներ, որոնք դուք և ձեր ընտանիքը կարող եք անել երջանիկ տուն կառուցելու համար:

Ամեն անգամ, երբ ինչ-որ բան եք գտնում, որ կարող եք անել, գրի առեք այն: Գտեք առնվազն հինգ ուղի, որոնցով կարող եք կառուցել երջանիկ ընտանիք, և նկարեք տուն և նրա մեջ՝ ձեր ընտանիքը:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, August 2011*-ի թարգմանությունը: Armenian 09768 201

Սուրբ Կանանց Միություն

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և դարձնել Սփոփող Միությունը ձեր իսկ կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Էլիզա Ռ. Մնոուն՝ Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, սովորեցրել է. «Պողոս Առաքյալը հնում խոսել է սուրբ կանանց մասին: Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է լինել սուրբ կին: Մենք պետք է ունենանք վեհ նպատակներ, եթե մենք սուրբ կանայք ենք: Մենք պետք է զգանք, որ մենք կանչված ենք կատարելու կարևոր պարտականություններ: Ոչ մեկը դրանցից ազատված չէ: Չկա ոչ մի քույր անչափ մեկուսացված և անչափ նեղ ասպարեզով, բայց այն, ինչ նա կարող է անել, մեծ նշանակություն կունենա երկրի վրա Աստծո արքայության հաստատման համար»:[1]

Քույրեր, մենք մեկուսացված չենք, ո՛չ էլ՝ մեր ասպարեզն է նեղ: Ընդունելով Սփոփող Միությունում աշխատելու մեր պարգևը - մենք դառնում ենք մասը այն միության, որը Մարգարե Ջոզեֆը նկարագրեց որպես «աշխարհի ամեն չարիքներից բաժանված - լավագույն, առաքինի և սուրբ»:[2]

Այս միությունը մեզ օգնում է ամրացնել մեր հավատքը և աճել հոգևոր առումով - տալով մեզ ղեկավարելու, ծառայելու և սովորեցնելու հնարավորություններ: Մեր ծառայության շնորհիվ մեր կյանքը գործունեության նոր լիցք է ստանում: Մենք զարգանում ենք հոգևորապես, և պատկանելիության մեր զգացումը, անհատականությունը և ինքնարժեքը մեծանում են: Մենք գիտակցում ենք, որ ավետարանի ծրագրի ողջ նպատակն է՝ մեզ հնարավորություն տալ հասնել մեր բոլոր հնարավորություններին:

Սփոփող Միությունը մեզ օգնում է նախապատրաստվել տաճարային օրհնություններն ընդունելուն, մեր կապած ուխտերը պատվելուն և Սիոնի գործին նվիրվելուն: Սփոփող Միությունը մեզ օգնում է մեծացնել մեր հավատքը և անձնական արդարությունը, ամրացնել ընտանիքները և գտնել ու օգնել նրանց, ովքեր կարիքի մեջ են:

Սփոփող Միության գործը սուրբ է, և սուրբ գործ անելը սրբություն է ստեղծում մեր մեջ:

Սիլվիա Հ. Ալրեդ, Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական:

Սուրբ գրություններից

Ելից ԺԹ.5, Սաղմոս ԻԴ.3-4, Ա Թեսաղոնիկեցիս Դ.7, Տիտոս Բ.3-4, Վարդապետություն և Ուխտեր 38.24, 46.33, 82.14, 87.8, Մովսես 7.18

Մեր պատմությունից

Խոսելով Նավուի Կանանց Սփոփող Միության մասին, Մարգարե Ջոզեֆը հատուկ շեշտում էր սրբությունը, բացատրելով, որ երբ քույրերը դառնան մաքուր և սուրբ, նրանք նկատելի ազդեցություն կունենան աշխարհի վրա: Նա բացատրում է. «Հեզություն, սեր, մաքրություն - սրանք են այն բաները, որոնք պետք է վեհացնեն ձեզ:. . . Այս Միությունը . . . զորություն կունենա վայելելու թագուհիների ներկայությունը իրենց մեջ: . . . Աշխարհի թագավորներն ու թագուհիները կգան Սիոն և ցույց կտան իրենց հարգանքը»: Իրենց ուխտերով ապրող Սփոփող Միության քույրերը, վայելում են ոչ միայն ազնվական մարդկանց հարգանքը. «եթե դուք արդարացնեք ձեր բացառիկ հնարավորությունները», ինչպես Ջոզեֆը խոստացել է քույրերին, «հրեշտակները չեն կարող հետ պահվել ձեր ընկերակցությունից»:[3]

Երբ քույրերը մասնակցում էին ուրիշներին ծառայելու և փրկելու գործին, նրանք դառնում են անհատապես սրբագործված: Լյուսի Մակ Սմիթը - Մարգարեի մայրը, ասել է այն բարի ազդեցության մասին, որ որ Սփոփող Միությունը կարող է գործել. «Մենք պետք է փայփայենք իրար, պահպանենք իրար, մխիթարենք իրար և հրահանգներ ստանանք, որպեսզի մենք կարողանանք միասին նստել երկնքում»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ
1. Eliza R. Snow, "An Address," *Woman's Exponent,* Sept. 15, 1873, 62.
2. Joseph Smith, in *History of the Church,* 4:570.
3. Joseph Smith, in *History of the Church,* 4:605, 606.
4. Lucy Mack Smith, in Relief Society, Minute Book Mar. 1842–Mar. 1844, entry for Mar. 24, 1842, Church History Library, 18–19.

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ինչպե՞ս եմ ես օգնում քույրերին, որոնց համար պատասխանատու եմ, զարգացնել և հասնել «վեհ նպատակների»:

2. Ի՞նչ եմ ես անում իմ կյանքը «լավագույն, առաքինի և սուրբ» դարձնելու համար:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message*, August *2011*-ի թարգմանությունը: Armenian 09768 201